եւ Օշխի[1] *առուակները, որոնք առատում են համանուն դեղերը իրենց պարապաներով եւ խառնուում՝ հարուից – հիւսիս ընթանալով Օլթի վտակին: Վոսխիանի ջուրն իջնում է Լեանչ լեռներից. ընդունում է Ինջա, Կոթիկ, Վաճի եւ Թուերի ալեբակների առուները. անցնում է Սօգիւտ եայլա, Խուվախբերդ, Մեշենեգ, Ագդուդ եայլա առուակները, որոնք գալիս են Ուրգան-Դիւզ (Ուրդան-Դից) անուտից: (Տես նախընթաց Ուրի ծանօթութիւնը:)*

Ալ կողմից ընդունում է միեւնոյն տարածութեան դէմ առ դէմ — ձիչդար հովտից՝ Օխորբերդի առուակը, որն անցնում է համանուն դեղից եւ տաճարից, Դերին-Սըրթից՝ Իլիսա, Միլնեգորա, Սուղբեչա, Մսուր-եայլա եւ Իշխանա[2] *առուակները եւ*

Ինճաձորը եւ Դիւաձորը: Ես կարծում եմ, որ այնեմարգու առասպելը Սեւ ծովի ափերից թափանցել է Պարխար լեռներից եւ հասել է մինչեւ Օլթի եւ Թորդումի ափերը: Դիւաձորը եւս կազմում է Անգով ձորի մի մասը, որը սաստիկ ոտի է եւ ջերմոտ. բնակչութիւնը նօսր: Այծերի եւ վիթերի բազմութիւնը առաջացրել է այնեմարգու եւ դեւերի առասպելը:

1 Օշխը նոյնն է, ինչ որ Օձերի, Օձուններն, Օշականների մասին յայտնուած է: Օձերի բազմութիւնը, ջրապաշտութեան շրջանը, վիշապազունքը պարզում են Օձերի գոյութեան եւ օձուններն հիմնարկութիւնների պատճառները:

2 Իշխանա-Իշխանքը Օլթի ջրի ալ ափին, Օլթիին խառնուող իշխան առուակի վայ է չինուած: Սա նշանակում Շինողի ծննդավայրը եւ բնավայրն է, որտեղից կամ ոտիկոս գնաց Իշմիածին, որտեղ անցկացրեց նոյնպէս իր ծերութիւնը: Սրա չինել տուած վանքերը, օթեւանները,